

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈԶ-ՑԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Բ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1940

ԹԻԻ 7



Յիսուս կու լայ Նշուաղէմի վրայ... և բոլոր աշխարհի վրայ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պեյրուքի «Լուսուն» կը գրէ. «Սուրիոյ, Լիբանանի եւ Եգիպտոսի Հայ Աւետիկեցիներու Միութեանսկան Համաժողովը՝ Տեղի ունեցաւ 3-8 Ապրիլ 1940 ին. Պեյրուք, մասնակցութեամբ 20 եկեղեցիներէն եկած 41 ներկայացուցիչներու: Սոյն ներկայացուցիչներէն 14ը՝ ձեռնադրեալ հովիւ, 4ը՝ արտօնեալ ֆարգիչ, 2ը՝ միսիոնար, իսկ 21ը՝ ֆարգիչ եւ պատիրակներ էին:

«Համաժողովին բոլոր անդամները զիսակից Հայ Աւետարանականութեան զուտ հոգեւոր կոչման, եւ քաջ վստահ իրենց Յարուցեալ Փրկչին գորութեան, 5 or սափակ մթնոլորտ մը վայելելի եւ՛ ինչ որոշումներով եւ քաջի տրամադրութիւններով՝ մեկնեցան իրենց տեղերը: Ներկայ արարմաններու բերումով Գաւիթի եւ Աղետանդրիոյ եկեղեցիներու հերկայացուցիչներ չունեցին»:

ԻՆՉ ՈՐ ՊԵՏԲ Է ԸՆԵՆ ԱՆՅԱՊԱՂ

Թեոսոր Բուզիկը ըսած է. «Երէ կը փախափա քան մը ընեց մեկու մը, պիտի՛ ե ընես անյապաղ»: Այս խօսքը ո՛րքան սխալողական հանգամանք ունի երիտասարդներուն համար երբ անոնք ա՛յնքան եկեղեցի են Սասանային, աշխարհի եւ մարմնի հրապոյրներուն, եւ հակառէս անոնցնէ խաբուեցու: Աստուծապաշտ ծնողքի մը տուած կրօնական կրթութիւնը, երբ անիկա իրենց կեանքին օրինակովը հաստատուի, երբեք ի գործ չի: Անոնց մանկական շրջները, որոնք սորված են խօսիչ, եւ առաջին անգամ արտասանած են Յիսուսի անունը, զայիք փորձութիւններուն դիմ ափսոսելի վահան մը կը կազմեն: Անոնք եւ՛հէն կրնան խոսորիչ եւ հեռանալ Աստուծուէ, սակայն անոնք երբեք պիտի չկրնան մոռնալ մանկութեան տարիներուն իրենց սորվածները: Եւ անոնք պիտի վերադառնան փառախ, ծնողաց յարատեւ եւ համբերաստար շարքներուն միջոցաւ:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԸ

Յարգարժան Խմբագրութիւն

«Աւետարանի Զայն»ի

Գաւիթի

Տէր Յիսուսով սիրելի եղբայրներ,

«Աւետարանի Զայն»ի հոգեւորնէ յօդուածները մեր ակնկեցներուն ալ շատ անոշ կու գայ: Ուրախ ենք որ այս խաւար աշխարհի մէջ դուք ալ բաժին կ'ունենաք Քրիստոսի Աւետարանին յոյս տրածով, որ «Աստուծոյ գորութիւնն է այն» բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար»: Կ'աղօթեմ որ Սբ. Հոգին մեզ գորացնէ եւ մեր աշխատանքը արդիւնաւոր եւ պտղաւոր ըլլայ, որպէսզի այդ միջոցաւ շատ մը անմահ հոգիներ փրկուին եւ Աստուծոյ զաւակներն ալ գորանան: Յասուի բարեւներով,

Տերոյր ծառայութեան մէջ

Զեր եղբայրը

(Վեր.) ՎԱՐԴԱՆ Ս. ՊԻՒԷԶԻԿԵԱՆ

Տէր Յիսուս Քրիստոսով,

Սիրելի եղբայր Խ. Թ. Սարեան

Փառք ըլլայ մեր պաշտելի ու սիրելի Փրկչին որ հեռու եւ մօտ, ծանօթ եւ անծանօթ մեզ անհետ իր արիւնովը մեկ ըրաւ, եւ օր մը իր քով հաւատարմ գիրար պիտի ճանչնանք եւ մեր ուրախութիւնը պիտի ըլլայ կատարեալ Փրկչին ներկայութիւնը վայելելով, փառք ըլլայ այս երջանիկ յոյսին համար զոր ունինք:

Սիրելի եղբայր, մեր դիմած «Աւետարանի Զայն»ը կ'ստանաւ որուն համար Աստուծոյ փառք տալու պատճառներ ունի: Շատ կը սիրեմ զայն, եւ կարդալով յենց մեծ օրհնութիւն կ'ըլլայ: Տէր օրհնէ մեզ որ այդ կերպով շատ հոգիներ փրկութեան ճայնը ընեն, հաւատացեալներ տեղի գորանան, եւ անմահ հոգիներ արբենան:

Ասկիւս է իմ աղօթքս:

Յիսուսով Զեր հոյրը,

ԶՄԻՌՈՒԹ ՓԱՐՍԻՈՂՆԵԱՆ

Աւետիկա

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈՉ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԼ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամատէր՝ Խ. Թ. ՍԱՐԳՍՅ. —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝
Վեր. Խ. Թ. ՍԱՐԳՍՅ.
Վեր. Թ. ԷՈՏՈՐ Ն. ՏԱՂԼԵԱՆ.
Պր. Կ. Ե. ԹՈՒՄՆԱՆՅ.

Բ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1940

ԹԻԻ 7

ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Բ.

Սոյն նիւթին շուրջ կ'ուզենք խօսք տալ տառից 'Քուկիք' ասուածաբանի մը: Նա կ'ըսէ, «Մեղի չափ Աստուծոյ հակառակ բան չկայ, եւ Աստուծոյ բոլոր պիտի չսայ որ Իր գլուխ գործոց մարդուն վրայ մեղք միշտ տեսնուի: Երբ նկատի առնենք Աստուծոյ զօրութեան անհունութիւնը՝ փնայցնելու այն բանը՝ որ Իրեն հակառակ է, ո՞վ կրնայ հաւատալ թէ Սասանան միշտ պէտք է յաղթէ: Ես համոզուած եմ որ նշմարիտ հաւատքի հետ անհատ եւ անհամապատասխան է մեկուն համար, քիստոնեայ ըլլալէ ետք տակաւին հաւատալ՝ թէ 'Քիստոս' Աստուծոյ յաւիտեանական ուղին, որուն տրուած է ամեն իշխանութիւն թէ՛ երկրին մէջ եւ թէ երկրի վրայ, բոլոր պիտի տայ մեղքին եւ Սասանային անոր վրայ իշխելու:

«Սակայն, պիտի բռնէ որ, ո՛չ մէկ մարդ իր ունեցած բոլոր ուժովը կրնայ փրկել ինքզինքը, եւ թէ ո՛չ մէկը կրնայ ապրիլ առանց մեղքի: Մենք ալ ամեն կ'ըսենք այս դիտողութեան, բայց երբ մարդիկ մեզի ըսեն թէ՛ երբ Աստուծոյ զօրութիւնը գայ մեզի օգնելու մեղքէն փրկութեան մէջ կարելի չըլլար չազդուիլ, այս վարդապետութիւնն ալ կարելի չէ մերժել: Դուն պիտի հաւանքի՞ր երբ բռնէ թէ. «Աստուծոյ ի գործ կը դնէ Իր զօրութիւնը զիս մեղքէն փրկելու, սակայն Սասանան կ'արգիլէ զինքը, թէ՛ Աստուծոյ հաւատ անկարելի է ընել առիթաւ, որովհետեւ Սասանան չուզէր կամ չսիրէր զայն: Թէ՛ կարելի չէ որ մէկը ձեռքազատուի մեղքէ, որովհետեւ Սասանան այնպիսի ուժ մը ունի փրկուածներուն մէջ՝ որ Աստուծոյ կարող չէ զայն չեզոքացնելու: «Ասիկա ողբալի ուսուցում մըն է, այսուամենայնիւ այս չէ՞ որ կը բարոյութեան կողմէ: Պարզ խօսով՝ անոնք կ'ըսեն. «Թէպէտ Աստուծոյ կը միջամտէ, բայց անկարելիութեան առջեւ կը զսնուի, որովհետեւ Սասանան այնքան խոր արմատ ձգէր է մարդուն բնութեան մէջ»: Մարդը Աստուծոյ ստեղծագործութիւնը չէ՞ միթէ, եւ չի՞ կրնար բոլորովին նոր ընել զայն մեղքը դուրս շարժելով անոր մէջէն: Եթէ կ'ըսես թէ՛ մեղքը խոր արմատ նետած է մարդուն մէջ, ես ալ կ'ըսեմ միեւնոյնը, սակայն Յիսուս մտած է աւելի խորը մարդուն

բնութեան մեջ՝ քան մեղքը, այնպէս որ Ան ստացած է իշխանութիւն «Սասանային գործերը քակելու»(*), մարդը փրկելու եւ հաստատելու արդարութեան եւ սրբութեան համար: Եթէ այդպէս չէ «Իրեն մօտեցողները բոլորովին կարող է ապրեցնելու»(*), «Մեղքը վրադ պիտի չիւթս»(*), Տերոջը դարձողին մեղքը կը ջնջուի»(*), «Մեղքին մարմինը պիտի փնանայ»(*) խօսքերը սուս են: Մենք պէտք է նետենք Սբ. Գիրքը եթէ կ'ըսենք՝ քե Աստուծոյ համար անկարելի է մարդը փրկել իր մեղքերէն:

«Գիտենք որ, կը շարունակէ ան, երբ մեր բարեկամները գերութեան մեջ են, փրկագին կը վնարենք իրենց ազատագրումին համար, բայց բան չենք վնարեր եթէ անոնք պիտի մնան իրենց շղթաներուն մէջ: Մեկը ինքզինքը խաբուած չզգա՞ր եթէ մեծագումար դրամ վնարէ սակարկելով անոնց փրկութիւնը որայեւզի ազատենք ըլլան, սակայն մնան որպէս գերիներ: Որքան ասեմ.— որքան որ կեանք ունին ապրելու: Ասիկա մարմնոյն համար է, սակայն այժմ ես կը խօսիմ հոգիներու մասին: Քրիստոս ինծի համար փրկանակ մը ըլլալու է զիս փրկելու իմ գերութենէս: Ես տեղ մը տակաւին բանտարկուած եմ: — Այո՛, «նեմարիս նեմարիս կ'ըսեմ ձեզի, ով որ մեղք կը գործէ, մեղքին ծառան է»: Եթէ կը մեղանշես դուն գերի եւ ծառայ մըն ես եւ պէտք ունիս ազատութեան: Ո՞վ պիտի վնարէ փրկանիս, ես խեղճ եմ, բան մը չունիմ: Ես ինքզինքս չեմ կրնար ազատել: Մեկը կայ որ եկած եւ վնարած է զիներ: Այս լուրը բարի է, հետեւաբար ես յոյս ունիմ այս շղթաներէս ազատուելու: Ի՞նչ է իր անունը: — Ան կոչուած է Փրկիչ: Արդ, ես կ'ակնկալեմ իմ փրկութեանս օգուտը: Ո՛չ, կ'ըսեն անոնք, դուն պէտք է մնաս մեղքի մէջ, որքան ասեմ որ կեանք ունիս: Ինչո՞ւ, երբեք պիտի չազատի՞նք: Այս չար ու խոտոր սիրտն ու խանգարուած կամքը միշտ պէտք է մնան: Պէ՞տք է հաւատացեալ մը ըլլամ եւ տակաւին չունենամ հաւատք որ հասնիմ սրբութեան եւ սուրբ կեանքի: Մեղքի վրայ իշխելու եւ զայն յաղթահարելու կարելիութիւն չկայ: Մեղքը վրաս պիտի իւթս՝ որքան ասեմ որ ապրիմ: Ի՞նչ տեսակ Փրկիչ մըն է ուրեմն ասիկա, կա՞մ ի՞նչ օգուտ ունիմ այս տեսակ փրկութենէն այս կեանքին մէջ»:

Սրդարեւ յուսահատական վիճակ մըն է ասիկա, բայց բարեբախտաբար իրականութիւնը այդպէս չէ: Այս եւ նախորդ յօդուածին մէջ յիշուած բազմաթիւ համարներ կը յուսադրեն մեզ յաղթական կեանքի մասին եւ ապրուած կեանքի անոր գործնականութեան վրայ: Անգլիոյ պետական եկեղեցիին աղօթքը սա՛ է. «Բարեհաճէ՛ Տէ՛ր, այսօր պահելու մեզ առանց մեղքի, շնորհէ որ այսօր մեղքի մէջ չիյնանք»: Մարդ գէթ օր մը կրնա՞յ ապրիլ այդպէս առանց մեղք գործելու, եթէ այո՛, ինչո՞ւ կարելի չըլլայ ամէն օր: Այս յաղթութիւնը երեւակայական է քե իրական, հո՞ս է քե երկինքի մէջ: Զե՞ որ մեր հաւատքի մասին բռնած է քե ան «աշխարհի կը յաղթէ»: Գիտովներ կը դառնան Քրիստոսի, եւ անմիջական ազատում կ'ունենան խմիչքի մեղքէն, անոնցմէ շատեր կը յայտարարեն քե, ալգոյի փափաքն իսկ կը չհաճայ իրենց մէջ: Հրա՞ւ. — այո՛, եւ այսպէս Քրիստոս կու տայ անմիջական եւ կատարեալ ազատում բոլոր մեզ դիւրաւ պաշարող մեղքերէն: Պարզապէս հարցում մըն է որ կ'ընենք, փրկուածութիւն դաւանող քրիստոնեաներու, մեծամասնութիւնը

(*) (1 Յովն. 3. 8, եբք. 7. 25, Հն. 6. 14, Գործ. 3. 19, Հն. 6. 6);

ԵԿԵՂԵՑԻՆ ԸՍՏ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Եկեղեցին աստուածային կազմակերպութիւն մըն է, որուն կատարեալ պատկերը կը գտնենք առաքելական դարու եկեղեցիին մէջ: Յիրաւի, շատ ցաւալի է որ այժմու եկեղեցիները որքա՞ն հեռացած են նախկին եկեղեցւոյ տիպար օրինակէն, նոյնիսկ իր ինքնութիւնը կորսնցնելու մասին: Անապատին մէջ կառուցուելիք խորանին համար՝ Աստուած Մովսէսին կարգ մը ուղղութիւններ և հրահանգներ տուած էր ըսելով. «Նայէ որ լեռը քեզի ցուցուած օրինակին պէս չինես ամէնը»: Նոյնպէս ալ անձեռակերտ եկեղեցին որ Քրիստոսի մարմինն է, պէտք է Սուրբ Գրային և աստուածային օրինակին վրայ հիմնուած ըլլալով՝ հետեւի անոր իր բոլոր գործունէութեանց մէջ: Մեր Տէրը առիթով մը ըսած էր թէ՝ «Ամէն առեկ որ իմ երկնաւոր Հայրս չի տնկեր, պիտի խլուի»: Եթէ եկեղեցիներուն մէջ կը գտնուին բռնաւոր կարգ մը օտար տունկեր՝ զորոնք Աստուած տնկած չէ, պէտք է անմիջապէս արարմատախիլ ըլլան: Անոնք օտարամուտ բաներ են, և կը ցուցնեն եկե-

ղեցիին անկումը իր սրբազան կոչումէն: Անիկա հարկ է որ մաքրուի բոլորովին, և վերածուի իր նախկին ճշմարիտ ու պարզ վիճակին:

Ուրեմն ի՞նչ կրնան ըլլալ հոգեւոր եկեղեցիի մը յատկանշական կարգ մը հանգումները՝ ապացուցանելու համար իր նմանութիւնը Նոր Կտակաբանի եկեղեցիին:

Եկեղեցին՝ 1. հաւաքուլայր մըն էր պատշաճութեամբ համար, 2. կազմակերպեալ մարմին մըն էր Քրիստոսի դասին համար գործելու, 3. դպրոց մըն էր աշակերտներ պատրաստելու, 4. բնակարան մըն էր հաւատացեալներու համար:

1. — Եկեղեցիին մէջ պատշաճութեամբ՝ նախկին աշակերտներուն համար ոչ թէ արտաքին ձեւակերպութիւն մը՝ հոպա հոգեկան ապրում մը, վաշիւք մըն էր որ կ'ստեղծուէր Ամենասուրբ Երրորդութեան հետ սերտ ու մտերիմ յարաբերութեան մէջ մտնելով: Այժմ, կարծես թէ եկեղեցական բոլոր արարողութիւնները ցուրտ ձեւակերպութիւններ են միայն: Մարդիկ կ'աղօթեն, կ'երգեն, քարոզ կ'ուն-

ունի՞ այս յաղթական կեանքը բարկութիւն, կիրք, ջղագրգռութիւն, հպարտութիւն, չարութիւն, նախանձ, փառասիրութիւն, եսասիրութիւն, եւ ասոր նման փոքր սակայն կործանարար մեղքերու վրայ: Խոնարհաբար հարցնենք, դարման մը կա՞յ այս վիճակին համար: Այս վիճակը մարմնաւորութիւն է, եւ մարմնաւոր վիճակը մահ է: Կը հաւատանք որ Տէրը կատարեալ փրկութիւն մը պատրաստէ է, Հոգիով եւ Յիսուսով լեցուած եւ բոլոր մեղքերէն պարպուած կեանք մը կայ: Այսպիսի կեանքի մը հաւատալ յանդգնութիւն չէ, չհաւատալ աւելի մեծ յանդգնութիւն մըն է: Սրբութեան եւ յաղթական կեանքի մասին կանխակալ կարծիքներդ պահ մը մոռցի՛ր, նախապաշարումներդ ձերբազատէ եւ ու՛ր դիւր Աստուծոյ խօսքին, ասիկա անպատեհ խնդրանք մը չէ անուշ:

(Վերջ)

Խ. Թ. Ս.

կընդրեն որպէս ձեւակերպութիւն: Եկեղեցի կը յաճախեն որպէս սովորութիւն: ԶԱստուած ճշմարիտ կերպով պաշտողներ ո՞րքան հազուագիւտ են այս գործու մէջ: Եկեղեցի յաճախողներուն մեծամասնութեան հպատակը՝ երգել, աղօթել, կամ քարոզ մտիկ ընել է, և նոյնիսկ ոմանց հպատակը բարեկամներուն հետ տեսակցիլ է: Նախկին քրիստոնեաներուն համար պաշտամունքը լոկ երգել, աղօթք մը տրտատանել և կամ քարոզ մտիկ ընել չէր, հապա տնոնց միջոցաւ Աստուծոյ սուրբ ներկայութեամբը յափշտակուած ըլլալով՝ Անոր հետ յարաբերութեան մէջ մտնել էր: Երգել, աղօթել և քարոզ ունկնդրել զԱստուած պաշտել չի նշանակէր, անոնք միջոցներ են միայն խօսելու Աստուծոյ և լսելու Անոր ձայնին: Աշակերտներուն համար հաւաքոյթի վայրն ու ժամն ալ չէր կարեւորը, ինչու որ, երբ և ուր որ հաւաքուէին զԱստուած պաշտելու, ուր ժամը և վայրը, սուրբ և նուիրական կը համարուէր: Ահա այս է իրական պաշտամունքը:

2.— Նախկին եկեղեցիին մէջ գործը աշակերտութեան նախնական պայմաններէն մին էր: Սուրբ Հոգին անոնց կը շնորհէր կարգ մը պարզեաներ աշխատելու համար իրենց սրտչուած միջավայրերուն մէջ: Եփեսացւոց թաղթին մէջ յիշուած պաշտոններուն, այսինքն, տաքեալներ, մարգարէներ, հովիւներ, տեստարոնիչներ, վարդապետներ, միակ և գերագոյն նպատակն էր ծառայել Քրիստոսի: Այս բոլոր պարգեւներն ու շնորհները հաղորդուած էին եկեղեցիին հաւատացեալներու շինութեան և մեղաւորներու փրկութեան համար: Այն դարուն ծոյլ և անձնասէր հոգիներու համար եկեղեցիին մէջ տեղ չկար: Հաւատացեալները կը նկատուէին որպէս գոր-

ծիչներ, պատերազմիկներ, և վկաներ: Լոկ հոգւոյն փրկութեան համար եկեղեցի յաճախելու զաղափարը երբեք զոյութիւն չունէր առաքեալներու ժամանակ:

3.— Նախկին եկեղեցին՝ դպրոցի մը յառուկ բոլոր յատկանշական հանգամանքները ունէր: Հաւատացեալը ճշմարիտ աշակերտ մը, ուսանող մըն էր: Անիկա պէտք էր խոնարհ, հեղ և զիւրանաց ըլլար, պատրաստ դաստիարակուելու որ եւ է անձի մը կողմէ որ կարող էր վարդապետելու: Նորադարձը միշտ կարօտ էր հոգեւոր ուսումի, որուն զեղեցիկ և տիպար օրինակը կը տեսնենք Ապոլոնի պարագային մէջ, որ Աղեքսանդրիոյ երեւելի գիտնականն ու հրապարակախօսը ըլլալով՝ ինքզինքը յանձնած էր կորնթոսի երկու (այր և կին) խեղճ վրանագործներու հոգեւոր դաստիարակութեան: Իսկապէս ի՞նչ օրինակելի խոնարհութիւն: Հաւատացեալը միշտ աշակերտ է, ու աշակերտ կը մնայ ուսումնասիրելու Քրիստոսը, և ստիպելու Անկէ:

4.— Նախկին եկեղեցին ընթանեկան յարկի մը հանգամանքն ալ ունէր, ուր բոլոր հաւատացեալները որպէս քոյր և եղբայր կը հաւաքուէին իրարու անոյ շնորհակցութիւնը վայելելու իրենց Մեծ Առաջնորդը Յիսուս Քրիստոսի ամենատուրք ներկայութեանը մէջ: Անոնք սերտօրէն կապուած էին իրարու Քրիստոսի պաշտելի սիրովը, և յիշուել այսպիսի սիրոյ կատարեալ կապ մը անհրաժեշտ էր իրենց, կարենալ միաձայն վկայելու համար աշխարհի տաջեմ, հակառակ տաջեմ կերպ հալածանքներու: Հոն կատարեալ հաւատարմութիւն կար: Աղքատութիւնը և չքաւորութիւնը, տեղափոխութիւնը և անփորձութիւնը եր-

բեք տրգելք չէին հանդիսանալ իրարու հետ ընկերակցելով՝ կարեկցելու համար։ Անոնց խումբին մէջ տասի՛ ճանի դանաղանութիւն ալ չի կար։ Այժմու սովորութեան նման՝ եկեղեցիին մէջ սմանց՝ այսինքն հարուստ և բարձրաստիճան տնձերու մասնաւոր նստարաններ վարձելու սովորութիւնը գոյութիւն չունէր, որ հիմնովին հակառակ է Աստուածաշունչի (Յակ. 2. 1-9)։ Հոն աշտուածիւն չկար, հարուստ, ազգատ, ուսեալ և ազէտ ամէնքը հաւատար էին, և ունէին միեւնոյն իրաւունքն ու առանձնաշնորհումը որպէս ընտանիքի մը։

Քրիստոնեայ եկեղեցիի մը, այսպիսի հանգամանքներով կրնայ շատ մեծ ոյժ մը հանդիսանալ վկայելու համար ճշմարտութիւնը։ Այդպիսի եկեղեցիի մը հովիւը՝ զայն այլեւս պարզ գործի մը տապարէզ չի նկատէր, հապա գործակից մը Քրիստոսի գործին մէջ։ Անիկա կ'աշխատի դաստիարակելու հաւատացեալները որպէս վկաներ և պատգամաւորներ։

Արդեօք ո՞ր աստիճան եկեղեցիները մօտեցած են այս օրինակին։

Վեր. ԹէՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԵԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԳՈՐԾԱԾԷՐ ՄԵՐ ԶԱՓԻՐ

Ոսկերեսն մեզի կ'ըսէ որ շատեր զանց կ'ընեն Տերուհայան աղօթիկն, «Ինչպէս որ մենք սլ կը ներենք» խօսերը։ Անոնք չեն համարձակիր Աստուծոյ խնդրել վարուիլ իրենց մեղքերուն հետ ինչպէս իրենք կը վարուին գիւղերէն ցաւցնողներուն հետ։ Մեզմէ շատերուն համար շատ գեշ պիտի ըլլար եթէ Աստուած գործածէր մեզի համար այն չափը որով մենք կը չափենք ուրիշները։

ՀՈԳԻՈՅՆ ԼԻՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ԻՆՎՈՒՏ

(Գործ. 9. 17)

«Եւ Անանիոս գնաց և մտաւ այն տունը, և ձեռքերը անոր վրայ դնելով՝ ըսաւ. Սաւուղ եղբայր, Տէրը զիս զրկեց, այն Յիսուսը որ ճամբուն մէջ քեզի երեւցաւ երբ կու գայիր, որպէսզի տեսութիւնդ ստանաս, ու Հոգւով Սրբով լեցուիս»։

Այս համարին մէջ չորս ճշմարտութիւններ կան։ 1. Մենք կրնանք լեցուիլ Հոգւով Սրբով։ 2. Մենք կրնանք լեցուիլ տնմիջապէս որ նոր կեանք ստանանք։ 3. Մենք կրնանք յանկարծ լեցուիլ։ 4. Մենք կրնանք զայն գիտնալ։

1. Մենք կրնանք Հոգւով Սրբով լեցուիլ. — Դիւրին է այդպէս խօսիլ, բայց ինչպիսի լուրջ և փառաւոր կարելիութիւն կայ այդ խօսքին մէջ։ Հոգիով լեցուիլ, ինչպէս գործնան ծառը լեցուած կ'ըլլայ աւիշով — բունը լեցուած, ճիւղերը լեցուած, տերեւները լեցուած — խորունկ տեղեր ծածկուած արմատներէն սկսեալ մինչև տմենարարձր տերեւները լեցուած։ այնպէս լեցուած ինչպէս առողջ մարդու մը մարմինը կեանքով լեցուած է, այնպէս լեցուած, ինչպէս հրաշէկ երկաթը կրակով լեցուած է, Երկաթը կ'աւնեւ, անիկա պող է և գորշ գոյն, կը գնես կրակի մէջ, ջերմութիւնը կը մտնէ անոր մէջ և շուտով կը փոխէ անոր գոյնը և զօրութիւնը, և այժմ որ կրակը տիրած է բոլորքած երկաթին, երկաթը այնպէս լի է ջերմութեամբ որ եթէ բռնես զայն գուն չես զգար պող երկաթը այլ տիրող կրակը։

Եւ կարելի է այնպէս լեցուիլ Հոգիով, որ չքանայ ամէն գրգռութիւն, ցանկութեան ամէն տենդը, անէանայ մեր շարժառիթներն, դիտաւորութիւններն, պորձառնութիւններուն մէջէն եսականութեանը Այնպէս լեցուիլ Հոգիով, որ անհետանայ մեղքի համար ունեցած ի՞նչ յայտնի եւ թէ գաղտնի համակրութիւնը, եւ անյայտանայ Աստուծոյ հանդէպ ունեցած ամէն գիտակից եւ անգիտակից հակառակութիւն։ Այնպէս լեցուիլ, որ Աստուծոյ ըլլայ ամենաբարձրը մեր հոգւոյն մէջ եւ իբր անոր հետեւանքը սրտի եւ կեանքի լիովին հպատակումը Աստուծոյ խորհուրդին ու կամքին։

2. Մեք կրնանք լեցուիլ, անմիջապէս ու նոր կեանք ստանանք. — Երեք օր էր միայն որ Սաւուղ տեսած էր այդ հրաշալի տեսիլքը որ փոխած էր իր կեանքը։ Սամարացի հաւատացեալները դեռ նոր հաւատացել էին Յիսուսի երբ Սբ. Հոգւով լեցուեցան։ Եւ ասիկա շատ թանկագին ճշմարտութիւն է ինծի համար, որ նոր դարձի եկողը նոյն ժամուն կրնայ ստանալ Հոգւոյն հրաշալի լեցունութիւնը։

Տարիներ առաջ Ամերիկայի մէջ երիտասարդ մը կար, վայրագ, անմիտ եւ անսունձ։ Ան քաղաքին զանազան եկեղեցիները կ'այցելէր ծաղրի առարկայ ընելու համար տեսածներն ու լսածները։

Անոր այս վարմունքը ժամանակի ընթացքին այնպէս եղաւ որ պաշտօնեաներ իրենց եկեղեցիներուն դռները փակեցին անոր առջեւը։ Այս տղան օր մը լսեց որ իր բնակած տեղէն քանի մը մզոն հետեւ վրանի մը մէջ մեծ ժողովներ պիտի սուրբուին։ Վրանի մէջ ժողով չէր տեսած եւ կ'ուզէր անգամ մը երթալ եւ տեսնել զայն։ Առաջին կիրակին այնտեղ էր

ան եւ ներկայ եղաւ բոլոր ժողովներուն, եւ ծաղրեց ամէն բան։ Սոյն կիրակնօրեայ ժողովները դոյզն ինչ ազդեցութիւն չէին ընել իր վրան, սակայն կը փափաքէր ներկայ ըլլալ, եւ կ'ըլլար։

Իրիկուն մը Սբ. Հոգին համոզեց զինքը, եւ երբ քարոզիչը հրաւեր տուաւ առաջ գալու ապաշխարելու ժողովներուն, ան առաջինն էր առաջ եկողներուն։ Անոր մօտ նստած էր սիրելի, ծեր, հաւատացեալ կին մը, որ զինքը կը ճանչնար, ծունկի եկաւ իր քովը, այդտեղ Սբ. Հոգին յայտնեց իրեն թէ ինքը մեղաւոր է, եւ ինքը մեղքի դառն եւ յաղթահարող զգացումներու տակ բոլորովին փշուրեցաւ։ Ան աղօթեց, քովը նստող կինն ալ աղօթեց իր հետը։ Աղօթքի մէջ այնպէս ժամեր կ'անցնէին, ուրիշ փրկութիւն որոնողներ կու գային Տէր Յիսուսի եւ ուրախութեամբ լեցուած դուրս կ'ելլէին, այս տղան սակայն կը մնար, կ'աղօթէր, կու լար եւ կը փափաքէր Տէր Յիսուսէն փրկութիւն գտնել։ Անոր հետ էր այդ սիրելի պառաւ կինը, կ'սպասէր եւ կ'աղօթէր մինչեւ որ ան փրկուի։ Կէս գիշերուան մօտ երբ վրանին մէջ միայն իրենք մնացել էին, խեղճ երիտասարդը Յիսուսի վրայ նետեց իր մեղքերուն բնը, եւ Աստուծոյ Յիսուսի սիրոյն համար թողուց անոր մեղքերը. եւ ան կրցաւ ուրախանալ Աստուծոյ ներող սիրոյն վրայ։ Ան օտքի ելաւ նստած տեղէն, Յիսուսը գտած, եւ իր երեսը կը փայլէր ուրախութեամբ։

Յետոյ այդ սիրելի պատուը ըսաւ անոր. «Յովսէփ, ինծի հետ տուն երթանք, քեզի պիտի տամ գրքոյկ մը «Խրատներ նորադարձներու համար» վերնագրով։ Եթէ դուն ետանդուն աղօթքով այն գիրքը կարդաս, մեծ օգնութիւն պիտի ըլլայ քեզի համար»։

Գիշերուան մութին գալցին կնոջ բնա-
կարանը և կինը ներս մտաւ, որ զըր-
բոյիւր բերէ: Մութին մէջ ուրիշ գիրք
մը բերաւ, մարդիկ զայն դիպումս կը
կոչեն, բայց մենք տախտակաւ Աստուծոյ
մատը կը համարենք: Երբ երիտա-
սարդը կարգաւոր համար բացաւ, տե-
սու թէ տախտակ կնկան ըսած գիրքը
չէ այլ մաքրագործութեան և Հոգիով
լեցուելու մասին է: Այն գիշեր ան
չքնացաւ, կարդաց գիրքը և կարգա-
ւոր Յիսուսի հանդէպ ունեցած իր
գիտակից սիրոյ ուրախութիւնով ան
համոզում գոյացուց թէ իրեն համար
այ հնարաւոր է Հոգւոյն լեցունութիւ-
նը ստանալ Յիսուսի ձեռամբ: Եւ
այնանկ իր սենեակին մէջ Աստուծոյ
հետ մինակ գիտցաւ այդ հզօր Հոգիով
մկրտութեան անհրաժեշտութիւնը, և
ինչպէս ապաւինած էր Տէրոջը իր
մեղքերուն թողութեան համար, նոյն-
պէս պարզ և որոշ կերպով ապաւի-
նեցաւ Անոր Հոգւոյն լեցունութիւնը
ստանալու համար ալ: Այնտեղ վրա-
նին մէջ երբ ան ապաւինեցաւ Աս-
տուծոյ, Աստուած ալ անոր տուաւ
մեղքերու թողութիւն, նոյն Աստուած
այժմ ալ լեցուց զինքը Սբ. Հոգւոյն
առատ լեցունութիւնովը, և այն օրէն
սկսեալ այդ երիտասարդը Աստուծոյ
մէկ հաւատարիմ ծառան էր, Տէրը
գործածեց զինքը հազարաւոր հոգինե-
րու փրկութեան և բազմաթիւ հաւա-
տացեալներու արթննալուն համար:

Ուստի իր մեղքերու թողութեան հա-
մար Տէրոջը ապաւինելէն քանի մը
ժամ չանցած այդ գեղատի երիտասար-
դը գիտակցութեամբ լեցուն, ստացաւ
Հոգւոյն փառաւոր լիութիւնը:

մինչեւ որ հասուն քրիստոնեայ դառ-
նաս և այն տեսն կրնաս ստանալ սոյն
օրհնութիւնը» — Ես կ'ըսեմ քեզի՝
իմ Տիրոջս անունով, եթէ Յիսուսի
հաւատքով եղած ես Աստուծոյ որդի,
եթէ Սբ. Հոգիով վերստին ծնած ես,
ուրախ Աստուած պատրաստ է լեցնել
քեզ Սբ. Հոգիով, որքան ալ մանուկ
ըլլաս հաւատքի մէջ:

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՍԻ ԿՈՉԸ

«Ինձի եկէ՛ք» (Մատթ. 11. 28)

Քրիստոնէութիւնը ձեւերու և
կերպերու մէջ չէ, այլ տառնց խոր-
քին մէջ: Յոսի և կորստաբեր է զա-
նոնք իրարու հետ չփոթելը: Աստուած
հոգի է և Անոր մատուցուած երկըր-
պագութիւնը հոգիով պէտք է ըլլայ,
ինչ որ մարմինով կը կատարուի գործ
չունի բնաւ աստուածաշնորհութեան
խորհուրդին հետ (Յովհ. 4. 24):

Արտաքին ձեւերն ու ծէսերը, ու-
րոնց այնքան յարգ կ'ընծայուի շատ
մը եկեղեցիներու մէջ՝ աղերս չունին
ներքին կեանքին հետ, մինչեւ իսկ
փնտաւար են անոնք, որովհետեւ յու-
ճախ անոնք հոգեկան ներքին վերա-
ծնունդի տեղը կը բռնեն ծիսապաշտ-
ներուն համար:

Մարդիկ Քրիստոսէ հեռանալով
հեռացած են ճշմարիտ կրօնքէ, և ու-
նոնք միայն կը գոհանան անոր ար-
տաքին ձեւերովը, մինչեւ իսկ կ'աշ-
խատին քրիստոնէութիւնը յարմար-
ցնել իրե՛ց տպրելակերպին և իրենց
փափաքած մեկնութիւնը տալ անոր:
Մինչ մեղքին բոլոր տակաւին կը մնայ
իրենց ուսերուն վրայ, անոնք կ'աշ-
խատին թեթեւեղութեամբ զայն ձեւակա-
նութեամբ և ալ աւելի կը ծանրաց-

րացնեն իրենց վիճակը: Ահա այս հոգեկան մեծ ճնշումի տակ յոգնած մարդոց է որ ուղղուած է Փրկչին կոչը «Ինծի եկէք»:

Սակայն մարդիկ կարծես կը վախնան Քրիստոսի գոյէ, որպէս թէ նա կը կանչէ զիրենք կողոպտելու իրենց առողջութենէն, դրամէն, տաղանդներէն, երջանկութենէն: Ասիկա ըսուած է թշնամիին համար (Յովն. 10. 10): Իսկ Յիսուս եկած է մեռածին՝ կենդանութիւն, հիւանդին՝ առողջութիւն, ակարին՝ զօրութիւն, յոգնածին՝ հանգստութիւն, թշուառին՝ յաւիտենական փառք տալու: Եկած է կորսուածը փնտռելու և փրկելու: Պէտք է այս անուշ ձայնին, «Եկէք ինծի», քաղցր հրաւերին տնտալ, բոլոր կապանքները մէկդի նետել և վազել Կենաց աղբիւրին: Ան է Կենաց հացը և ջուրը, միայն Ան կը գոհացնէ ծարաւի հոգին:

Ոմանք չեն գար Յիսուսի, որովհետեւ անոնք զինովցած են աշխարհարհի հրապոյրներով: Ոմանք շատ զբաղած են, ժամանակ չունին գալու պաշտամունքի յատկացուած ժամերը կը գործածեն առօրեայ շուկայի գործերով: Իսկ ուրիշներ, անհոգ են միշտ, իրենց ակամջին հնչող հրաւերին հանդէպ: Մարդոց մէջ կայ դասակարգ մըն ալ որոնք յաւակնոտ են, իրենք զիրենք կը հաւնին: Ուրիշներ ալ քրիստոնէութիւնը արարողութիւններու ներկայ ըլլալ կը կարծեն: Վերջապէս Չարը մարդիկը զանազան կերպերով հնոսցուցած է Յիսուսէ, և կ'արգիլէ որպէսզի չհնազանդին «Ինծի եկէք» հրաւերին: Երանի թէ այդպիսիներ սթափէին, և ըմբռնէին թէ ինչպիսի՞ ստահու տեղեր կը պատին, և ենթակայ գահավիժելու անդունդ:

Արթնցէ՛ք, մօտեցէ՛ք Փրկչին, մըհարմացէ՛ք Անոր ձայնին հետ, երբ

դեռ պատահութիւն կայ: «Պատրաստուեցէք զԱստուած դիմաւորելու» Բ. Կոր. 5. 10 ին մէջ կը կարդանք. «Վասնզի պէտք է որ ամէն ալ Քրիստոսի տեսնին առջեւ ներկայանանք, որպէսզի ամէն մէկը իր մարմնովը ըրածներուն փոխարէնը տանէ՝ ինչ որ գործեր է, թէ՛ բարի և թէ՛ չար»:

Պիտի ելլենք ամէնքս ալ այդ ահաւոր Դատաւորին առջեւ, ոչ մէկը պիտի կրնայ խուսափիլ անկէ, հետեւաբար պէտք է պատրաստ ըլլանք այդ օրուան: Մեր կեանքը՝ քանի մը կարճ տարիներու կեանք մըն է միայն, ապրինք զայն Աստուծոյ փառքին համար:

Գահիրէ, 16-5-940

ԳՐԻԳՈՐ ՅԱՇԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԷՆ

Դ.

ԵՐԱՆՈՍ(*)

Երանոս հաւանաբար ծնած է Զմիւռնիոյ մէջ կամ անոր մօտ աեղ մը Փոքր Ասիոյ մէջ, և իր պատանեկութեան չըջանէն, ինչպէս ինքը կը պատմէ մեղի, Զմիւռնիոյ մեծանուն եպիսկոպոս Պողիկարպոսէն սորվելու արածնութիւնը ունեցած էր: Հաւանական է նաեւ որ ան Պողիկարպոսին ուղեկցած է անոր դէպի Հռովմ ճամբորդութեան մէջ, և Հռովմի եպիսկոպոսին թախանձանքին վրայ՝ որոշեց Գաղղիա մեկնիլ ո՛ւր իրեն պէս շատ յունախօս քրիստոնեաներ կային: Այդ ժամանակ Պոտինոս, ինքն ալ յոյն, Լիոնի եկեղեցւոյն եպիսկոպոսն

(*)Քրիստոնէայ հայրապետներու սոյն կենսագրականները գիրքի ձեւով հրատարակելու իրաւունքը կը վերապահուի քաղցամշին:

էր: Լիոն այն ատեն Կելտական Գաղղիոյ գլխաւոր քաղաքն էր և հռչակ հանած, ինչպէս այժմ այն ատեն այ իր առեւտրով և ճարտարարուեստով: Լիոն նաեւ համբաւեալ էր իր հանգէս տօնակատարութիւններով, մանաւանդ Օգոստոս կայսեր յիշատակին կատարուածը համոնուն ամսուն 1 ին, սակայն ճակատագրական և դժբախտ օր մըն էր տախկա սոյն քաղաքին մէջ բնակող Քրիստոսի նուիրեալ զինւորներուն համար:

Երանոս քանի մը տարիէ ի վեր հոն կը գտնուէր արդէն սրպէս Լիոնի եկեղեցւոյն երէցը Պոսինոսի եպիսկոպոսութեան ատեն, 177 թուին, երբ Մարկոս Ավրելիոս կայսեր կողմէ ըսկած հալածանքը ծանօթէն իջաւ Գաղղիոյ եկեղեցիներուն վրայ: Անկէ ողջուած նահատակներուն չարչարանքներն ու հաստատամտութիւնը նկարագրող մանրամասն տեղեկագրութիւնը ունինք — թերեւս գրի առնուած Երանոսի կողմէ — այնքան տպաւորիչ որ կ'ուզենք մեր ընթերցողներուն ստորեւ ներկայացնել տնոր մէկ մասը:

«Այլ պատմագէտներ, կ'ըսէ Եւսեբիոս՝ քրիստոնեայ պատմիչը (ինքն է որ կուտայ մեզի սոյն արձանագրութիւնը) հոգ պիտի տանէին գրելու պատեւրողմներու մէջ տեղի ունեցած յաղթանակները, շահուած դափնիները, թշնամիներուն դէմ բանակներու կատարած հզօր գործերը, ջարդերն ու խժգուժութիւնները, պանծոցներու համար հայրենիքն ու անոր զաւակները: Սակայն մեր ապրելու կերպի մասին խօսող պատմութիւնը՝ կատարուած ամենէն խաղաղ պատերազմներու վրայ, պիտի արձանագրէ անջնջելի սիրելիութեւն վրայ, աւելի ճշմարտութեամբ սիրոյն քան հայրենիքի և ուրիշ սիրելի բաներու: Աստու-

ծապոշտութեան զինուորներուն խիզախ կեցուածքը, ցվերջ հանգուրժող քաջութիւնը, չար ոգիներու և անտեսանելի ոտոխներուն դէմ տարուած յաղթանակները, շահուած դափնիները, ահա տոնք են որ պիտի արձանագրէ պատմութիւնը յաւիտենական յիշատակի համար:

«Գաղղիա երկիր մըն էր ո՛ւր տնոնք՝ որոնց մասին կը խօսիմ, վաղեցին իրենց ասպարէզի ընթացքը, և այդ երկրին մէջ ամենէն նշանաւոր քաղաքներն էին Լիոն և Վիէնն: Սոյն երկրին մէջ ամենէն համբաւեալ եկեղեցիներ իրենց նահատակներուն արձանագրութիւնները զրկեցին Ասիոյ և Փոնգիոյ մէջ գտնուող եկեղեցիներուն, պատմելով ինչ որ տեղի ունեցաւ հետեւեալ կերպով:—

«Քրիստոսի ծառաները որոնք կ'ապրին Գաղղիոյ՝ Լիոն և Վիէնն քաղաքներուն մէջ, Ասիոյ և Փոնգիոյ մէջ գտնուող եղբայրներուն, որոնք ունին միեւնոյն հաւատքը, յոյսը և փրկութիւնը, խաղաղութիւն, շնորհք և փառք մեր Հօր Աստուծոյն, և մեր Տէր Յիսուս Քրիստոսէ: Մեր նեղութեանց լեցուն չափը, և հեթանոսներուն՝ սուրբերու դէմ մոլեգնութեան տարողութիւնը, և սուրբ նահատակներուն իրենց չարչարանքները կրելու կարողութիւնը անկարող ենք պատմել, ոչ ալ կարելի է գրի առնել, որովհետեւ թշնամին ճնշեց մեր վրայ իր բոլոր ուժովը: Աստուծոյ շնորհքը մաքուեցաւ թըշնամւոյն հետ թեւ և նեցուկ եղաւ տկարին, տկարներուն կողքին դաւ հաստատուն սիւններ, որոնք իրենց համբերութիւնով յաղթեցին և այսպէս հրաւիրեցին իրենց վրայ չարին ամբողջական յարձակումը: Ասոնք, որդարեւ քաջաբար պայքարեցան թշնամւոյն դէմ, կրելով ամէն տեսակի նախատինք և պատիժ, խորհելով

այս ամէնը ոչինչ, կ'ըտորային դէպի Գրիստոս իրականութեան մէջ ցոյց տալով՝ «Թէ այս ժամանակին չարչարանքները բոն մը չեն գալիք փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի» (Հ. 8. 18)։ Նախ անոնք կրեցին խուժանէն քաղով յորձակումները, անոնց հարուածները և այն ամէնը որ կատաղած խուժան մը սովոր է ընել իրենց տանիքի եզոզներուն։ Հրապարակի վրայ դատաւորներու կողմէ նախնական հարցաքննութենէն ետքը բանտարկուեցան մինչեւ կառավարիչին գալը։ Անոնց մէջ կային մեծապէս պատրաստակամ նահատակուելու, կային սկարներ և և անկարող դիմագրաւելու մեծ փորձութիւնը։ Այս վերջիններէն 10 հոգի մեր մէջէն զատեցին, որը մեզի մեծ վիշտ պատճառեց։ Կը սարսափէինք խորհելով թէ մի գուցէ անոնք թուրքերուն և ես քաշուէին բարոյալքում յատուց բերելով միւս քրիստոնեաներուն մէջ։ Անոնք որոնք օր ըստ օրէ կ'իյնային, տեղերնին կը լեցուէր ուրիշ եռանդուն քրիստոնեաներով երկու եկեղեցիներէն, որոնց վրայ կ'ընած էին եկեղեցիները։

Ձեռքառուութեամբ էին նաեւ քրիստոնեաներու նպատկանոց հեթանոս ծառաներ և ասոնք ստատոնայական խորամանկութեամբ վախճալով սուրբերուն և նիթարկուած խոշտանգումներէն, և զինուորներուն թելադրութեանց անսալով մեզ կ'ամբաստանէին մարդու միտով սնանոյներ և ասոր նման գարշելի ոճիրներով զորս յիշել անգամ անպատեհ է։ Երբ մեր մասին այս լուրերը տարածուեցան զուրաբ, վայրագօրէն ամէնը մեզի դէմ լարուեցան և մինչեւ իսկ անոնք որոնք նախապէս չափաւոր զիրք բռնած էին ստատիկ կատողեցան և այն ատեն կատարուեցաւ ինչ որ ըսուած էր մեր

Տէրոջ կողմէ. «Ժամանակ պիտի գայ որ ամէն ով որ ձեզ սպանէ այնպէս պիտի սեպէ թէ Աստուծոյ պաշտօն կը մատուցանէ»։

(Շարունակելի)

ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՐԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

ՊԶՏԻԿ ԲԱՆԵՐ

Վերջերս մեծ հրդեհ մը տեղի ունեցաւ Փրանսական Սէն Վիգթոր քաղաքին մէջ։ 32 հազար չէնքեր բոլորովին քանդուեցան և ուրիշներ ալ վնասուեցան։ Յիշեալ հրդեհին պատճառած վնասը կը հաշուուի մօտաւորապէս 300,000 տոլար։ Այս հրդեհը շատ չնչին բանով մը սկսաւ, պզտիկ սղոյ մը ձեռքը քանի մը լուցկիներով կը խաղար փայտի մթերանոցի մը մէջ։ Առաջին անգամ խորհեցաւ թէ ասիկա լաւ խաղ մըն է բոցը տեսնելու համար, սակայն քիչ յետոյ հովը զարկաւ և բոցը տարածուեցաւ չէնքին մէջ։ Յետոյ անմիջապէս կրակը փռւին պանդոկը հասաւ, անկէ ալ մինչեւ քաղաքին ստեւարական կեդրոնը, քանդեց 32 չէնքեր ու վերածեց զանոնք մոխիրի։ Տղան տեսնելով պատահածը վազեց և պահուըտեցաւ մացառներու մէջ, սակայն զինքը գտան վերջապէս և ստիպեցին որ բոլորը խոստովանի։

Լուցկի մը, տես շատ փոքր բոն մըն է, սակայն, տես թէ որքա՞ն մեծ և տեւիչ հրդեհի մը պատճառ եղաւ։ Ասոր նման կան տակաւին շատ մը պզտիկ բաներ, զորոնք հոս չենք կըրնար յիշել։ Մեզքը առաջին նայուածքով յաճախ շատ պզտիկ բոն մը կ'երեւայ, սղոյ մը նախ կ'սկսի գէշ

խօսքեր խօսիլ, եթէ զանոնք չարուհի տեսնէ, անիկա իրեն սովորութիւն մը պիտի ըլլայ և երբ մեծնայ ան կը դառնայ հայրնայի մը: Ան երբեք չի քաշուիր Աստուծոյ Սբ. Անունը պարտապէս տեղ ընտանը տանելէն, սակայն յիշէ որ Աստուած երբեք անպարտ չի ձգեր այն անձը որ իր Անունը պարտապէս ընտանը կ'առնէ և այդ Սբ. Անունով պարտապէս և սուտ երգումներ կ'ընէ:

Ուրիշ տղայ մը կ'սկսի պզտիկ բան մը գողնալ, խորհելով թէ երբեք բան մը չպատահիր որքան տան որ իր գողցած բանը մէջտեղ չեկէ կամ չի գտնուի: Նոյնիսկ ոմանք կը խորհին թէ այսպիսի բաներ ընողները ճարպիկ կ'ըլլան ժամանակի ընթացքին: Սակայն երբ տարիները յառաջանան ան կ'սկսի համարձակ ըլլալ իր մեղսալից կեանքին և գործին մէջ և աւելի մեծ բաներ գողնալու կը յանդգնի: Թիւրքաւ ան պիտի միտնայ աւագակներու խումբին և պիտի ձեռնարկէ պանգաներ և մթերանոցներ գողնալու, և կողոպտելու բռնի ուժով և զէնքով: Յաճախ այս տեսակ քայլեր մարդը առաջնորդած են մարդասպանութեան և յետոյ ձերբակալուելով կամ մահուան կը դատաւարարուի և կամ ցկեանա բանտարկութեան:

Այս բոլորին պատճառը, նկատի չառնուած պզտիկ մեղքերու հետեւանքն է: Աշխարհի մէջ շատ գէշ մարդիկ կան, և եթէ անոնք պահ մը իրենց ետեւը դառնան և ձգած գէշ հետքերուն նային, պիտի տեսնան որ անոնք յառաջ եկած են մեղսալից ունակութիւններէն զորոնք թեթեւ բաներ կը կարծէին սկիզբէն: Մեղքը տահաւոր բան մըն է, ան մարդը մահուան կ'առաջնորդէ: Ինչպէս որ երբ մտադ կրակին մէջ խօթես կ'այրի, այնպէս ալ մեղքը քեզ պիտի այրէ և

մահուան պիտի առաջնորդէ: «Մեղքին վարձքը մահ է» կը յայտարարէ Աստուծոյ խօսքը, «Սակայն Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք է մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով»: Որքան հաճելի է տեսնել տղաքներ և աղջիկներ որոնք հոգ կը տանին բարի վարմունք ունենալու և գէշ լեզու չեն գործածեր, սուտ չեն խօսիր և չեն գողնար:

Սակայն ասկէ աւելի կարեւոր բան մը կայ, ան է քու սիրտդ Տէր Յիսուս Քրիստոսի տալ և զայն ընդունիլ իբրեւ քու անձնական Փրկիչդ: Եթէ զայս ընես, Ան քեզ պիտի ազատէ քու մեղքերէդ և քեզի զօրութիւն պիտի չնորհէ որ քրիստոնէական վայելուն կեանք մը տարիս, որով պիտի կարենաս փառաւորել քու Տէրդ, թէեւ դուն տարիքով մեծ մէկը չես, սակայն և այնպէս մեղաւոր մըն ես, Յիսուս քու տեղդ մեռաւ որ քեզ փրկէ, հիմա է Անոր գալու և զԱյն ընդունելու ժամանակը:

Թարգ. Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ

ԿՈՐՈՒՍՏԸ ՇԱՀ Է

Հեղեղը տարաւ տունն ու ջաղացը — խեղճ մարդու մը բոլոր ունեցածը այս աշխարհի վրայ: Հեղեղին դադարումէն ետք երկայնած կը դիտէր ջուրերուն կասաւած աւեր, թխուր եւ յուսահատ, հեղեղին պատճառով անցրին խեղճը նեմաւեց բան մը: «Ոսկիի կը նմանի» կ'ըսէր ան ինքնիրեն: Յետ մօտէն լնկութեան տեսաւ որ իրապէս ոսկեհանք էր: Ան հեղեղը որ զինքն ինքնուրուց կը կարծէր, զինքն հաւատարմացած էր:

Յաճախ այդպէս է կեանքին մէջ: Վիշապ կը մերկացնէ մեզ մեր ունեցածներէն, սակայն ի յայտ կը բերէ Աստուծոյ սիրոյն զանգերը:

Ճ. Ր. ՄԻԼԼԸՐ

ՃՍՌԱՊԱԹՈՒՆԵՐ

Երբեք Ան հեռու չէ մեզմէ վստացի ժամանակ, եւ ողնացող փոքորիկներէն վեր Ան կրնայ լսել օգնութեան տեսարանայն աղաղակը:

ՀՕԼՏԸՆ

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Յայտնաբերված ԺԳ. գլխուն մեջ յիշուած գազանը՝ որուն քիւր 666 է, կը կարծե՞ք որ Հիթլերը ըլլայ:

Պատ.— Այս օրերս շատ աղի հարցունք կ'ուղեն մեզի: Անխցապէս ըսենք՝ որ մենք չենք գաղիւր աղիպիսի դատարի հաշիւներով, եւ չենք հաստատար գաղտնիքներն ալ, պարզապէս անոր համար որ նիւստութեան արժանի չեն անոնք: Ունակ իրենց խելապիսիքն կը հանեն գնորական հաշիւներ որոնք հիմնաւոր չեն: Օրինակ. մեկը անգլերէն a, b, c միւնչեւ z նշանակեր է 125, իբր հիմն թուելով (a)ը 100: Այն գիրերը որոնք Hitler կը հեղեն, համապատասխան քիւերուն գումարը կը հաւասարի 666 քիւին: Սակիւ աղանդակ եւ տղայական հաշիւ մըն է: Նախ, որովհետեւ յայտնաբերուած գիրքը գրուած է յունարէն, հետեւաբար պիտի է Հիթլեր հեղող գիրերը յունական տառեր ըլլան: Երկրորդ, որովհետեւ մեզի չքառիւր թէ ի՞նչ հիմն վրայ (a) գիրը 100 ի տեղ տնտուած է, որովհետեւ անգլերէն տառերուն մեջ (c) գիրն է որ հարիւրի տեղ ընդունուած է:

Այս առթիւ ըսենք որ նախկին դարերու տառերուն ալ ուշադրութեան անարկայ եղած է գազանին ալն քիւր: «Յառաջ քերուած շատ մը անուններուն մեջ, կ'ըսէ մեկնիչ մը, յունարէն «Լադիկոս» անունը որ կը նշանակէ «հոռմայեցի» կու տայ 666 քիւր: Երանոս, ինքն ալ երկրորդ դարու տառերէն կը յիշէ «Լաթիկոս» քառը յարելով. «Ըս իս շատ հաւանական է այս, որովհետեւ անպիսի է Իսկիւնի յորս քաղաքութեանց վերջնոյն անունը եւ յայտնուած են որ այժմ (իր ժամանակը) կը տրեւն»:

Աւելն դարու մեջ գտնուած են մարդիկ որոնք ի դիպ ու յանդիպ տեսարաններ յայտնած են աղի մասին: Երբ

մեծն Նաթոյիւն սկսաւ իր անդամադրելի արշաւներուն, ալն ասեմ շատ քանակն Նաթոյիւնի ուղեցին տեսնել «այդ անօրհներ» ինչպէս կը կոչէ գալն մեծն անասեալ: Նաթոյիւն իր անվառունակ վախճանով չիրականացուց աղի յոյսը: Տակաւին մեր օրերուն երբ Լենինը մեջտեղ ելաւ եւ յեղափոխութեամբ աշխարհը համայնախար դարձնելու շարժումին ըսկաւ, մեր ներկայ ժամանակներու գուշակները աշխրհին յառեցին անոր վրայ իբր գալիք քիւ 666 ը: Ճիշդ աղի ասեմները տիկադոր Մուսոյիկի անունը մարդոց ուշադրութիւնը գրաւել սկսաւ: Մարգարեութեանց աղիպէս կոչուած տեսնողներ, Մուսոյիկի հին հոռմեական կայսրութիւնը վերականգնելու յաւանութիւններուն մեջ գտնել կարծեցին վերջապէս «Կորուսեալ Որդին»: Բայց անաւասիկ Հիթլերը կը գլէ կ'անցնի միւսները իր յանդուգն գործըսկերպով եւ տներէնոյր տարած արագ յաղթութիւններովը: Դարձեալ գործի վրայ են գուշակներ, որոնք քան գործ չունին կարծես, գնորական հաշիւներ փնտնելու ետեւէ են, եւ մասնաւոր ծախով ծնողայով կը տարածեն աղի աղանդակի գիտերը: Մենք կը յանձնարարենք մեր ընթերցողներուն հանդարտիլ, եւ աւելի շատ ժամանակ տալ աղիքի: Օրերը չար են, պիտի է ջանադիր ըլլանք Հոգիով շնորհուն վիպաութեանը համար անարարութեան միւնչեւ որ Տերը գայ: Յետոյ վստահ ըլլան մեր ընթերցողները՝ թէ եկեղեցին չվերցած «այդ անօրհներ» պիտի չյայտնուի: Կարդա՛ 2 Թես. 2, 3-8 համարները:

Ս.

Եթէ Բրիտոս կենաց հացն է, ուրեմն անաց Անոր չեն կրնար ապրիլ:

ԷՏՎԻՆ ՅՈՐԵՍՈՒ ԶԱՅՆ

ԷՊԷՏԻ ԹԵԼԵՄԻՆԱԹԸՆ ՎԱՐ ՄԸ ՏԵՐ

Պու էն մուհիմ սիւալը սէն քէն-տի քէնաինէ ետփըպ անը հալլ էթմէ-լիսին, պաշգա պիրի պու մէսէլէյի, ետնի սէնին ճանըլըն իլ էլ էպէտ խէ-լտս օլմասը մատտէսինի սէնին իշիւն իճրա էտէմէզ. պու տիւնեատա սէնին էն իլք վէ էլլէմ իշին վէ գարարըն, էօմրիւն խիթամա կէլմէզտէն, կիւմիշ թէլ գօփմազտան վէ ֆուրաթ էլ-տէն գաջմազտան էվվէլ էպէտիյէթինի թէլմին էթմէք օլմալը աըր. «եպէսի-լէթինի ԳԿ՝հէս սաաֆ հէսնէսին»:

Էօմրիւտէ չօգ մուհիմ գարար վէ ինթիխապլարըն օլա պիլիր, լաքին անլէրին էն աղիմի «էվվէլա Ալլահըն մէլէքիւթիւնիւ թալէպ էթմէք տիր» զիրա պիր աաէմ չօգ չէյլէր գազանըպ՝ սըհէթ, կիւղէլլիք, սէրվէթ, մէվզի, շտն ու չէօհրէթ, հաթթա Խաքէնտէր ի աղիմ վէ Նաթօլիօնլար կիպի մէմլէ-քէթլէր ֆէթհ էտէ պիլիր, լաքին Յի-սուսա աէտի. «Պիր աաէմ պիւթիւն տիւնեալը գազանըպ աա, քէնտի ճա-նընը զայ իտէրսէ, ԳԿ՝ իսթիֆասէ հ-սէր» զիրա ազ սօնրա անլէրին ճիւմ-լէսինի պու զէմինտէ թէրք էտէճէյիզ, վէ տիւնեա վէ սնըն հիյէթի զաիլ օլաճազ աըր, ինտանըն ճիւմլէ չէրէֆի օթըն չիչէյի կիպի տիր, անլէրէ սա-րըլմազ աէյէ՞ր մի, էպէտի օլան չէյ-լէրէ սարըլալըմ: Պէօյիւք Րէսուլ Պօ-ղոս՝ պիւթիւն ինտանլարըն պու էօմր հազգընտա օլան էֆքեալարընը շու իպարէլէր իլէ իզա էտիօր. «Եիյէլիմ վէ իշէլիմ, զիրա եարըն հօլէնէյիզ» լաքին տէրհալ սազընաըրարազ տի-յօր՝ «Ալտանմալընը, Ալլահ իսթիհազ օլունմազ»:

Էյ տօսթուլ ալտանմա, սէն Խա-

լիզին օլան Ալլահըն սուրէթի իւզրէ խալզ օլունմազ օլունպ՝ էպէտէն ետ-շամազ իւզրէ սէմալաթաա, աալլէթ օլունմազաա սըն, սէնին իշիւն Յի-սուսա գանընը տէօփիւշ տիր թա քի սէնի ճիւմլէ կիւնահարընտան հըյ-գալըպ եէնի պիր մախլուզ էտէրէք Նուրաա սաքին օլան մուգատտէսլէ-րին նասիպինէ հիսսէտար էյլէյէ:

Պու նէ ճէլիլ մէվզի, սէն պուն-տան մահրում գալմազա իլ էլ էպէտ րա՞զի միսին: Սէնին նասիպին օլա-ճազ էնճապ՝ եա էպէտի հայաթ, սա՛-տաէթ, ճէլալ վէ Քրիստոսըն էպէտի մէլէքիւթ վէ սալթանաթը, վէ եա-խաա՝ էպէտի ահլար վէ ֆիղանլար, աղլալըն վէ տիշ. գըճըրաամասը, Նուրը օլմայան հէյլէթլի պիր էպէ-տիյէթ. . . Լաքին պու մէսէլէ պիր Լօթարի կիպի տէյիլ տիր, եա չըգար եա չըգմազ, խայր, խայր, անը սէն պու զէմինտէ իքէն, հէման շիմաի գարար էթմէլիսին, «Րապալ պուլու-նապիլի իքէն Անը արալընըզ» տի-յօր Ալլահըն Քէլամը: Պիր ազ սօնրա Րապալ Յիսուսա պու տիւնեատան Քէն-տի Հազիզի Քիլիսասընը գալտըրա-ճազ, Րուհ իւլ Գուսաա ալընմազ, նէ վաիզ վէ նէ միւմին գալտազ, զիրա անլէրին ճիւմլէսի հէր թարաֆտան ճէլալ իլէ սէմալաթաա ալընմազլար, վէ օ զէման պու զէմինտէ ֆէրհաա ու ֆիղան պաշլալաճազ:

Իմաի տճէլէ էյլէ, աալլէթի իհ-մալ էթմէ, իսլաա ֆուրաթընը գուլ-լան: Կէճ վէ կիւճ օլմազտան իսլաա-քեաթ Յիսուսա գալպինի աչ վէ հէմ չիմաի վէ հէմ տէ էպէտէն փիշիման օլմալաճազսըն, Օ սէնի պու գարան-

լըդ վէ գօրգուլը կիւնլէրաէ էպէտի պաղուլարընտա հըֆղ էտէրէք, աղ սօնրա տախի շօլ կիւղէլ լիմանա վէ տիյարա սալիմէն հէթիշտիրէճէք, վէ կէճէսի օլմայաւն Եէնի Երուսաղէմաէ ճիւմլէ աղիգլէր իլէ պէրապէր Բապպընա վէ Բապպըն Քէնտիւնի սէվէնլէր իշիւն հաղըրլաւըղը կէօզ կէօրմէտիյի վէ գուլագ իշիթմէտիյի վէ ինտանըն խաթրընա կէլմէտիյի չէյլէրի կէօնէնիյո՝ ձէլալսա Եաւալաճագսըն:

Բապպ ճիւմլէմիղի քէնտի էպէտի հուզուրընա չըգմաղա հաղըր էյլէսին: Ամին:

Կ. Յ. ԹՈՒՄՍԵԱՆ

ՄՈՒԶԱՅԱԳԱ ՎԱԳԹԸՆՏԱ

Մուղայագա իշինաէ պուլուհան հէր պիրաաէր վէ հէմշիրէյի, թէճրիպէ զէմանընտա Ալլահաւն լութթ թալէպ էթմէսի իշիւն տա՛վէթ էտէրիմ, թաքի հէր թէճրիպէտէ Ալլահըն էլինի կէօրմէյէ միւզթէտիր օլա, վէ պատէհու օ էլէ միւթի օլմաղա, վէ տէյիլ հալընըղ միւթի օլմաղա, իլլա աւա ղաղի օլմաղա վէ ծնուն իշիւն մէսրուր օլմագ լուլիֆուհաւն նախ օլա «Օ Բապպ ալըր ինտիւտէ խօշ օլանը հափսըն»: Զանն էտէրիմ քի հէր մուղայագանըն պիր սօնու վար տըր, նէ զէման տէնիլէն հէրէ հէթիշիլիր իսէ, չիւնքի նէ զէման Բապպ կէօրիւր իսէ քի պիղ Քէնտիւնին խաթէտիյի իսթիմաղա ղաղի օլույօրուղ էլինի իւղէրիմիղաւէն կէրի չէքիւղ տիյէճէք: «Արթըղ էվլաւըմը թէէտիպ էթմէք ղաղըմ տէյիլ, օ պանա միւթի տիր, թէէտիպ վաւըթաւըյլէ մէյաւանա կէլէճէք օլան նէթիճէ հասըլ օլմը: տըր. իմաի սնը թէէտիպ էթմէյէճէյիմ»:

Եարտըմ էլտէ էթմէնին իքի հուլու վար: Էվվէլա, հէփ տօսթլարընա միւրաճա՛աթ էտիպ պօշա տիւշմէք վէ էնճամ Ալլահա հաղլաշմագ: Տիկէրի՝ տօղրուտան Ալլահա կիթմէք: Պու սօնրաքի էն գըսաւ հօլ տըր, վէ պատէհու Ալլահ տօսթլարընը սանա հարաւըմ էթմէլէրի իշիւն թէշվիգ էտէճէք: Էվվէլա Ալլահը վէ տնըն սալա հընը արաւ: Հէփ մուղայագալարտան խէլաւ, Ալլահըն սաղ էլինտէն կէլէն խէլաւ տըր: Իմաի հէփ մուղայագալարտան գուրթուլմագ իշիւն էն չապուգ հօլ՝ տաւա՛ իլէ Ալլահա հաղլաշմագ տըր: Շու հա պու տօսթուհա միւրաճա՛աթ էթմէ, իլլա գալպինի Ալլահըն հուզուրընտա տէօք:

«Հէր պօշա սարֆ հսիլէն նեֆես Տուա՛յա վագֆ հսիլսէյի պես, Շու օլուրաւ մհուրաւ նաղլեւիլդ.— Աղաւ սըր իւլիս վի դայիլիլդ»:

Ինտանի տօսթլար պիղի մէֆթուր գըլարլար: Թէնճէ էն գուվլէթլի տաւապէ գըրըլըր, վէ էն սաւըղ գալպ պա՛տգէն սարսըլըր: Լաքին պիղիմ Ալլահըմըղ էպէտի վէ հէր չէյի գատիր տիր: Քի՛մ Անա պիհուտէ հէրէ իթիմաւ էթմիշ տիր: Նէ՛րէտէ տիր օ քիմսէ քի տիյէպիլսին. «Պէն կէօղլէրիմի Անա գալտըրաւըմ, Անա իւմիւտ էթտիմ, ֆաղաթ ծնտան տօլայը խէճիլ օլտոււմ»:

Դաւիթին հալընըղ Ալլահա կէօղլէրինի տիքմէսի նէ՛ ճէլիլ պիր չէյիաի, ծնուն նէթիճէսի պու իաի, օ փէք սաքին վէ ղահաթ պիր սուրէթտէ քէնտի քէնտինէ տէտի. «Ալլահ պէնի պուհաւան տա գուրթաւարաւագ»: Օլ սէպէպաւէն Սէմիիյէ ղաղսապլանուտը տնըն պաշընըն քէսիլմէսինի տըղու էթմէտի «Անը Ալլահ հափաճագ»: Էյէր պիր քիմսէ պու բուհաւա գալպ վէ ֆիքրինի սաղլար իսէ տնը

քիմ րաճաթադ էտէպիլիբի էյէր տաղլար տէնիզին օրթասընա տթըլսա վէ զէմին սարսըլսա եէնի տէ ճանընա սապր իլէ մալիք օլաճագ վէ սսուտէ հալաէ հաշալաճագ, Պէօյլէ պիլի ի- չիւն տէնիլէպիլիբի. «Անըն ճանը ս- սայիչ իլէ սաքին օլաճագ վէ անըն նէսլի զէմինի միրաս ալաճագ», «Անը հէփ հօլլորընտա մսուհափագա իչիւն մէլէքլէրինէ էմր էտէճէք», Պէօյլէ պի- րիսի տիր քի «Միւթա'ալըն հիմայէ- սինաէ սաքին օլուպ Գաաիրին սայէ- սինաէ իգամէթ իտէր», Անըն հազ- զընտա Րապպ տիյօր. «Պանա միւշ- թագ օլտուղու իչիւն անը խէլաս է- տէճէյիմ, իսմիմի պիլտիյի իչիւն անը հիմայէ ալթընա ալաճաղըմ», «Րապ- պա իլէլէպէտ թէվէքքիւլ էտինիզ, զի- րա Րապպ Ենովա էպէտի գալա տըր»,

Հէփ իթիմատլարընը թօփլայըպ պիր իթիմատա պիրլէշտիր վէ անը Ալլահըն իւզէրինէ գօյ, Օրալա պու- րալա տայանմա, օ հօլ իլէ էյրիլիբ- սին վէ տայանտըղըն գամըշ սէնի տէ- լէն մըզրաղա թէհալվուլ էտէր, Բիս- միլէն Ալլահա թէվէքքիւլ էթ, վէ մատէմ քի Օ հէր եէրաէ տիր Անա տայանարագ աօղրու վէ սապիթ տու- րուրսըն:

ՍՓՐՐՃԸՆ

Ալլահըն իբի Ալլահըն վէրսիյի գուվէք իլէ անճագ ինրա էսիլէպիլիբ, իմսի էյի ինրա էսիլիբ պիր ամէլ պիզիմ իբիլիք սէյիլ, իլլա Ալլահըն պիզէ իբլէսէսիբ:

ԱՆՏՐԻԻ ՄՈՒՐԻՆԵՑ

Քրիստոսըն մաճապպէթի մալի սիմայա պէնգէր, անը պէր բագ պիր սուրէքսէ սէյր է- սէպիլիբսին լուֆին վիսաթընը էօյլէմէգսին: Օ սէնիզէ պէնգէր, պիր ազանըզ անըն իչիլէ պազապիլիբսին, Քազսիք անըն սէրիլիյիլի էօյ- չէլէմէգ:

ՄՍԳԶԵՑԵ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ՏՕՍԹԱՆԷ ԹԷԼԳԻՆԱԹ

3. Նեֆսէն պօւալմագ. — Շու պօւալմագ սէօղիւնտէն գօրգմա. Սէ- նին իչիւն օ պէլքի, հօրղուշըզ, օ- սանճ, չօգ չէլլէրաէն քէֆ ի հէտ էթ- մէք մանա'սընը վէրիբի. Փապաթ օ տ'յնի վազըթտա մուհապպէթ քէմա- լիյէթ, վէ գուտսիյէթ մանասընը տա վէրիբի:

Հէր քիմ քի պօշալումագ, սէվէ- մէզ:

Հէր քիմ քի պօշալումագ, քեամիլ օլումագ:

Հէր քիմ քի պօշալումագ, մու- գատտէս օլումագ:

Նեֆսէն պօւալմագ՝ վաղիֆէմիզէ թախսիս ի նէֆա էթմէք տէմէք տիր, հէր կիւճլիւք, իքրահիյէթ, օսանճ վէ տ'տէմի մուվաֆֆագ իյէթ իմիզէ րաղ- մէն օ վաղիֆէյէ տէվում էթմէք տիր:

Նեֆսէն պօւալմագ՝ ֆէտա ի նէֆա էթմէք տէմէք տիր, օ հէր նէ չէքլտէ- տէ քէնտինի իպրաղ էթաէ — տուա, ճէհա, մուհապպէթ —: Տէյիլ հալընըզ անըն ինրասընա, իլլա իքմալընա մա- նի օլան հէր չէյ ֆէտա էտիլմէլի:

Նեֆսէն պօւալմագ՝ գալպի իս- թիլա էյլէյէն, աէրուշտէ Րուհ իւլ Գուտսըն ֆա'ալիյէթինի մէ'ն էտէն հէր չէյի, տիւնհալլի իտէալ վէ տսուտէ հալ իչիւն օլան հասրէթլէրի չէքիպ գօփարմագ տըր: Քէզա պիզի տու'ա, իչ վէ ույգու զէմանլարրմըզտա պի- հուղուր էտէն խայալի հիսալթաթլարը, պիզի սինրի պիր գուվվէթ իլէ կիպի ճէզպ էտէն ֆապաթ նէթիճէսինտէ պի- զի խարապ էտէն հէր չէյի պիր թա- րաֆ էթմէք տիր:

Նեֆսեկն պօռալմագ՝ հաստէլէրի-
միզին ճողիպէլէրինէ մուգալէմէթ
էթմէք տիր: Օ հաստէլէր անճաղ նէֆ-
սիմիզի խօշնուտ էտէրլէր վէ «օ չէյ-
լէր կիւնահ տէյիլ տիր» ֆըսըլտալտա-
րագ զամիրի թէսքին էտէրլէր:

Նեֆսեկն պօռալմագ՝ պիր սէօղ ի-
լէ գալլ, ֆիքը վէ խայալաթըմըզը
Ալլահը խօշնաւորմայան չէյլէրի մահվ
էտէն գուզվէթ տիր, վէ օ չօզ տէֆա
գալպիմիզէ էլէմ սէպէպի օլմագ պա-
հասընա վուգու պուլուր:

Նեֆսեկն պօռալմագ՝ պիր թէք
ա՛մէլտէն իպարէթ տէյիլ տիր, էօյլէ
օլտա անը իճրա էտէր վէ ազաա օլուր
իտիք: Օ՛ հայաթըմըզտա հէր սա՛աթ
վէ հէր տաղիդէ ֆէտափեարլըզ, զապ-
թի նէֆա, մուգալէմէթ վէ ֆէրաղաթ
իմա՛ էտէր: Փագաթ օլ զէման նէֆա-
տէն պօշալմագ տէվտի պիր ազապ
օլմա՞ղ մը: — Պայր, էյէր միւշէվիդ՝
մուհապպէթ վէ Ալլահ գօրդուսը իսէ:
Սէնի գիյարէթէ կէլէն տօթուհու
րահաթ էթմէք իչիւն ճիւզիճէ րահա-
թընը պօղմաղը զահմէթ տէյի կէօղէ-
տի՛րմիսին: Պու մանատա էօյլէ վա-
զըթլար օլուր քի Ալլահ քէնտի հու-
ղուրընը սանա հիսս էթաիրմէք իս-
թէր: Օ սէնինլէ պէրապէր տիր վէ
Քէնտինի սանա հազըն գըլմասը ի-
չիւն (Օ քի քեամիլէն գուտսիյէթ տիր)
սէն աթվարընտա տահա ըֆֆէթլի օլ-
մագ իսթէմէ՞զմիսին:

Անը սէնին գալպինէ գապուլ էթ-
մէք իսթէտիյինտէ սանա մուզիր տէ-
յի կէօթէրտիյի ֆիլանճա մուհապպէ-
թի, ֆիլա՛ճա մէնֆաթը, ֆիլանճա
տրղույու, ֆիլանճա տիւնհալի վէ
նէֆսանի մէյլինի սէնտէն տէֆ էտէ-
րէք Անա մահալ հազըրլամագ իսթէ-
մէ՞զմիսին:

Օ՛հ, քեաշքէ սէն Անը հազիդէրէն
սէվէ իտին:

Իչմէք իչիւն հէման հէման րազի
օլտուզըն զէհիր գաաէհինի վուրուպ
գըրմաղը ազապ եա իճպար տէյի թէ-
լագըր էտէ՞րմիսին:

Էօյլէ իսէ սէնի սափտըրան տիւն-
հալի, ճալիպէլի պիր քէյֆ սանա ի-
սապէթ էթտիյինտէ, եախօտ սէնի վա-
զիֆէնտէն ուզաղլաշտըլան ճալիպ սէս
իչիթտիյին տաղիգատէ, զամիրին սա-
նա «սագըն» տէյի ֆըսըլտաաղընտա
նոմէրա պիր մէվզի թութա՞րմըսըն:

Էյվա՛հ, ըրմաղըն ազընթըսըն
տիւշմիւշ պիր չիչէյի օ եալաշճա լա-
քին էմինճէ խարապիյէթէ կէօթլը-
տիյի կիպի, տիւնհա քէյֆի տէ աաըմ
պէ աաըմ աըր քի գալպի կիւնահա
գըլաղուզլար վէ անըն սիհրի թահթը
թէէտիլինէ կէչիլիլ:

ԵՐԷՑ

ԲԱՊՊ ԹԵՐԵՆՆԻՄ ՎԵՐԻՐ

օօօօօօ

«Միխուֆ հոյիւմ soqանըննա ալըննա,
Գըյնէթլի ճան կիօջիւ օլ պիր հանա,
Պահեհու օ հյիլիպ սէսի պանա,
«Պու հուր, աքըզ սէյնիզ օյսու սանա»:

«Էօւրիւն պու կիճիսի էյիւնի իչինճէ
Իւնիւս շիօյիսի soյսու գնպիւնէ,
Սիւսսան հազիլին միալի հալմէ
Շիֆա վալասան օյսու սէրսիւնէ:

«Էկ պէն սէսիւ. «հաքքա պու ճիվ էյիւնէր,
Յիւուս վի ճուրռնեսա խափիֆ սիրիւր,
Չիւնֆի հալա Բապպ հիւֆիւսալքանաք հէր
Կիճիսի հալմէ վիւրիւր, օ՛հ սալմա սիվիւր»:

Զօգ սէճա էն ճաթէլի խիսթիւնուր, է-
ճէնսիլէրիճէ էն ուճազ շէյլէրէ խըզէր էսէն-
լէր սիր:

ԹԷՈՏՈՐ ԳԸՅԼԸՐ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԺԽԱՐՀԷ

Մեր բնածին մեղիին սկզբնապահ-
նաոր ո՞վ է.— Աւերիկեան քերք մը
կը գրէ. «Քրիստոնեայ եկեղեցիներ մեծա-
մասամբ կ'ուսուցանեն քե սնցնիւր
մարդկային հոգին աշխարհ մեծ ասէն
բժաւորուած կը մտնէ սկզբնական մեղ-
քով: Ըստ կաթողիկոսներուն այս օրէնքին
միակ բացառութիւնը կը կազմէ Մարի-
ամը՝ Յիսուսի մայրը, որուն հոգին աս-
նուածային շնորհքով սնադարս պահուած
է միջնէ գոյութիւն տոնելը: «Կան աս-
նուածաբաններու մէջ խիստ մարդիկ ո-
րոնք կը խորհին քե՝ ամէն գէշ բան այս
աշխարհի վրայ, ծագում կ'առնէ կեկան
միջոցաւ, հետեւաբար այս սկզբնական
մեղքին պատճառը կը վերագրեն Եւայի:
Աւելի նուազ անկողնական պատճառա-
բաններ այդ բանը կը վերագրեն միայն
Ադամին: Այս վերջինները սրբազու-
թիւն մը կ'ստանան ուղեով փոխած են
իրենց վարդապետարանի (սքեփիզ) այս
մասը: Ըստ այս փոփոխութեան, «Այն
մեղքը զոր կը ժառանգենք մեր նախա-
նորէնք» եղև. պիտի ըլլայ, «Այն մեղքը
զոր կը ժառանգենք Ադամէն» եղև.: Եւա-
յին մեղքը կը նկատուի անձնական, եւ
այն կերպով կը պրծի իր պատասխանա-
ւորութենէն»: Բայց Պօղոս տարբեր կը
խորհի այս «Փեմիկիս» աստուածաբան-
ներէն (1 Տիմ. 2. 14):

§ Փոքրիկն Հաւասք, Յոյս, Սեր.—
Այս օրերս Աւերիկայի մէջ իր գուշա-
կութիւններով ուշադրութիւնը իր վրայ
կը գրաւէ 4½ տարեկան աղջիկ մը որ կը
կոչուի Հաւասք, Յոյս, Սեր: Նիւ Եորք
տարած է մասնագէտ հոգեբան Տոքթ.
Ճ. Պ. Բայնի կողմէ ֆնկուելու: Արտա-
քին երեւոյթով ուրիշ աղջիկներէ տարբե-
րութիւն մը չունի: Այսուամենայն իր
շարք մը զգայալուց նախաստութիւն-
ներով աշխարհը զարմանքի կը մատնէ:
Իր գուշակութիւններուն մէջ են եւրոպա-
կան ընդհանուր պատերազմ մը, Հիթլեր-
Սթալին դաշինքը, իր գտնուած ֆաշա-

ֆին դպրոցին հրդեհուիլը, Բաւերի դիմա-
հիին կրած յարձակումը եւ այլն, որոնք
զարմանալի ճշդութեամբ իրականացած
են: Իր մայրը, Տիկ. Հարթիկ կ'ըսէ քե
իր աղջիկը գուշակելու ձիւրք ի յայտ
բերած է երբ դեռ 18 ամսու եր: Օր մը
կ'իսկացէ իր մօրը ասն բարեկամներէն
Յորէնք Մաք Ուիլիսն մեռած ըլլալը: Յետ
ֆնկութեան կը հասկցուի քե մարդը Նիւ
Եորք ճամբորդած է եւ հոն պանդոկին
մէջ հետեւեալ օրը յանկարծանաւ եղած
է: Իր գուշակութիւնները կ'ընդունի ե-
ղեր զիշեր ասէն երբ արթուն է կամ
մտքի յափշտակութեան մէջ է: Յաճախ կը
գործածէ անհասկնալի բառեր, մանա-
ւանդ հին անգլերէն: Փոքրիկն Հաւաս-
քին մայրը, սակայն, հաւասք չընծայեր
իր աղջկան գուշակութիւններուն, բայց
որովհետեւ յաճածները ճիշդ կ'ըլլեն, բա-
ցատրութիւն մըն ալ չկրնար տալ:

§ Միսիոնարական քերք մը կը կը տե-
ղեկագրէ քե՝ Մեքսիկոյի բազմաթիւ հրե-
դիկներ Քրիստոսի կը դառնան: Անոնց
մէջէն խումբ մը մարդիկ շինած են ի-
րենց սեփական եկեղեցիներ: Երբ իրենց
կ'ըսուի քե 150 տարւոյ պիտի արժէ
ասիկա իրենց, հետեւեալ շարքս դրա-
մը ձեռնհրէին կու գան: Զոհողութեան
մեծութիւնը հասկնալու համար ըսենք՝
որ օրական 7 դահեկանի աշխատող մար-
դիկ են անոնք: Եկեղեցիին պէտք եղած
ֆարերը եւ երկաթեղները 25 մըն հետո
տեղերէն իրենց ուսերուն վրայ կրելով
բերած են: Աստուած պահէ զիրենք ի-
րենց այս սուսքին սիրոյն մէջ, որով
զուրկ են շատ մը եկեղեցիներ այժմ:

§ Բարոգի մը ծառայած է եկեղե-
ցիի մը մէջ 43 տարի, եւ այդ ժամանա-
կալիցոցին ընդունած է եկեղեցիէն ներս
7 հազար անգամ: Ռիզոր մըն է ստիկա:
Երբ յոբելանը կ'ստանուն է 43 հոգի
եկեղեցիէն (երկու սեռէ եւ ամէն տարիսի
պատկանող ներկայացուցիչներ) մէջ մէկ
վարդ նուիրած են հովիւին:

ՕԴՆԵՆՔ ԼՈՅՍԻՆ ՏԱՐԱԾՄԱՆ

Այն երկիրները ո՛ւր պատերազմը գոյություն ունի իր բոլոր սարսափովը, եւ այն երկիրները ո՛ւր վճանգը կ'զգացուի պատերազմի մը. շուսաւորութիւնը օրհնի տակ ստնուած է: Տեղ-տեղ սահմանափակուած է անկիւս, տեղ-տեղ ալ բռնությունն արգիլուած: Առաս յոյսի վարժուած քաղաքի մը բնակչութիւնը կը նեղուի այս սխալողական խառնուրդէ: Մարդուն վրայ ջղայնութիւն կը բերէ, գիշերը փողոցին մէջ քաղցած սառնապսակ է եւ վճանգներով լի: Խառար միշտ գեշ է:

Սակայն շատեր այսօր հոգեւոր խառարի մէջ կ'ապրին տեսականօրէն, անոնք խարխալելով կը քաղեն առանց գիտնալու թէ ո՛ւր կ'երթան: Անոնք որ յոյսը ունին իրենց մէջը եւ իրենց հետը կը տեսնեն թէ քանի՞ խառարի մէջ պատկանէր վճանգի ենթակայ են, այո՛, յաւիտեանս կորսուելու: Մեր պատրաստութիւններն է այդպիսիները զգուշացնել եւ զանոնք առաջնորդել Լոյսի: Այս քերքը այդ ծառայութիւնը կ'ընէ: Մեր ընթերցողներէն պիտի խնդրեմք մեզի աջակցիլ, իրենց աղօթքներովը ամենեւնի առաջ, յետո՛յ՝ գործակցելով մեզի: Անոնք որոնք անվճար կը բողոքեն իրենց բաժնեկիները, անյապաղ մեզի դիմելով մեծապէս պիտի օգնեն Տերոյը գործին: Չար օրերու մէջ կ'ապրինք, աստուր բռնելով կենաց խօսքը փայլինք աշխարհի մէջ շուսաւորներու պէս: Կատարենք մեր պատրաստութիւնները, որպէսզի ստօքով չլնանք երբ յանկարծ Տերը երեւնայ վերին:

"ԱՐԹՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՂՕԹՔԸ"

Գրեց՝ ՏՈՒԹ. ԹՈՎՄԱՍ ԲԷՅՆ. — Թարգ. Ե. Թ. ՍԱՐԻԱՆ.

Անապարեցե՛ք ապահովել օրինակ մը:

Գին՝ 5 Ե. Դ., Ամերիկա՝ 30 Սենթ, Ֆրանսա եւ Սուրիա՝ 8 Ֆրանկ:

Ստանալու համար դիմել հոնքագրութեանս հասցեին:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եզիպտոս՝ 25 Ե. Դ.

Ամերիկա՝ 1½ Տոլար

Ֆրանսա եւ Սուրիա՝ 30 Ֆրանկ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական անձուկ միմուկը, յօժար ենք այդպիսիներուն զեղչեալ գնով մը դիմել թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալին միջոցաւ:

ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ. — Բոլոր ցրանական առաքումներ, յօդուածներ եւ քղաքականութիւններ պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen — Shoubra, CAIRO (Egypt).